ՀՀ ԿԳՄՄՆ «Խաչատուր Աբովյանի անվան Սևանի ավագ դպրոց» ՊՈԱԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Առարկա՝ Աշխարհագրություն

Դպրոց՝ Սևանի N4 հիմնական դպրոց

Ուսուցիչ՝ Լիլիթ Հայրապետյան

Ղեկավար՝ Ն. Քարամյան

Սևան-2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ 1. Ագրոտորիզմի ընդհանուր բնութագիրը

1. Զբոսաշրջության պատմությունը և զարգացման փուլերը
2. Զբոսաշրջության նշանակությունը սոցիալ-տնտեսական համակարգում
3. Ագրոտուրիզմի էությունը և առանձնահատկությունները
4. Գյուղական կանաչ զբոսաշրջության էությունը
5. Ագրոտուրիզմը զբոսաշրջության ձևերի դասակարգման մեջ
6. Ագրոտուրիզմի կազմակերպման համար անհրաժեշտ սպասարկման ենթահամակարգերը

Գլուխ 2. Ագրոտուրիզմի աշխարհագրական առանձնահատկությունները

7. Ագրոտուրիզմի եվրոպական շուկայի վերլուծություն
8. Ագրոտուրիզմը Հարավային Ասիայում
9. Ագրոտուրիզմը Հայաստանում

Եզրակացություն

Առաջարկություններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տուրիզմի դերը համաշխարհային տնտեսության մեջ մեծ է։ Ոչ միայն տնտեսության, այլ նաև քաղաքականության, մշակույթի, իսկ վերջին ժամանակներում՝ նաև բնապահպանության ոլորտում պարզապես անժխտելի է։ Այն վերածվել է միջազգային հարաբերության և միջմշակութային հաղորդակցության կարևորագույն գործոնի։ Առանց վարանելու կարելի է պնդել, որ տուրիզմը դարձել է ժամանակակից մարդու կյանքի անհրաժեշտ՝ անբաժանելի հատկանիշ։ Հասարակական կյանքի անխախտ ու խելահեղ ընթացքը մեծացնում է տուրիստական ծառայությունների նկատմամբ պահանջարկը, քանի որ մարդիկ ավելի ու ավելի շատ են զգում հանգստի ու լիցքաթափվելու, կուտակված սթրեսները թոթափելու կարիքը։ Այդ պահանջարկի աճով պայմանավորված՝ առաջանում են տուրիզմի տարբեր ուղղություններ, որոնք միտված են բավարարելու հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խավերի պատկանող տարբեր նախասիրությունների տեր մարդկանց բազմաթիվ պահանջմունքները։ Առաջանում են տուրիզմի տարատեսակներ, որոնք կենտրոնանում են այս կամ այն գործառույթի և շուկայի այս կամ այն հատվածի վրա։ Այդպես է ձևավորվել գյուղական տուրիզմը, որը այլ տերմինով անվանում ենք նաև ագրոտուրիզմ։

Ուրբանիզացման ներկայիս տեմպերը ժամանակի հրամայականն են դարձրել որոշակի ժամանակ առօրյա ընթացքից կտրվելն ու բնության գրկում առանձնանալը, գյուղի կազդուրիչ օդի ազդեցությամբ ֆիզիկական և նյարդային լարվածությունը թոթափելու անրաժեշտությունը։ Էկոլոգիապես մաքուր սնունդն ու ջուրը նույնպես հսկայական մոտիվացիա են ստեղծում տուրիզմի այս տեսակի համար։ Մարդու առողջության պահպանումը ներկայումս համարվում է մարդկության առջև ծառացած թիվ մեկ խնդիր, ուստի ագրոտուրիզմը, լինելով ռեկրեացիայի տեսակ, այստեղ շատ կարևոր առաքելություն է ստանձնում։ Ագրոտուրիզմը համարվում է «կանաչ տուրիզմ»-ի տարատեսակ և իր ներդրումն ունի շրջակա միջավայրի պահպանման մեջ։

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Աշխարհի բոլոր զարգացած երկրները վաղուց հետաքրքրված են դրա զարգացմամբ։ Էլեկտրոնային հաշվողական տեխնոլոգիաների ամբողջ աշխարհում արագ զարգացումը և տուրիզմի մեջ ավտոմատացման ներդրումը այն դարձնում են նաև միջազգային տեղեկատվական տեխնոլոգիաների և գործընթացների ոլորտ։ Մեծ է միջազգային, տարածաշրջանային և ազգային տուրիստական կազմակերպությունների դերը, որոնք նպաստում են համաշխարհային զբոսաշրջության զարգացմանը և առանձին երկրներում ու մարզերում պաշտպանողական քաղաքականություն են վարում։

Մարդիկ ճանապարհորդել են դեռ Քրիստոսից առաջ, հիմնականում սովից կամ վտանգից խուսափելու համար։ Առաջին մարդկանց մնացորդները (Homo erectus) հայտնաբերվել են Արևմտյան Եվրոպայում, Աֆրիկայում, Չինաստանում և Ճավայում։ Այս փաստը ապացուցում է, որ հին մարդիկ ունակ էին երկար հեռավորությունների վրա ճանապարհորդել, առանց տրանսպորտային միջոցների։ Փյունիկեցիների կողմից փողի գյուտը և առևտրի զարգացումը, որը սկսվեց Ք.ա. 4-րդ հազարամյակում, կարելի է բնորոշել որպես ճանապարհորդության ժամանակակից դարաշրջանի սկիզբ։ Առաջին ճանապարհորդությունների թվում էին Օվկիանիայինը։ Փոքր փոխադրանավերը, որոնք ոչ ավելի էին, քան 40 ոտնաչափ, օգտագործվում էին Հարավարևելյան Ասիայից Միկրոնեզիա և Խաղաղ օվկիանոսով Մասկարենյան կղզիներ, Տուամոտու արշիպելագ և Միացյալ Թագավորության կղզիներ ճանապարհորդելու համար։ Հին հունական գիտնականները (Հերոդոտոս, Ք.ա.V դար) և այլ երկրների հետազոտողները (Պիֆեյ. Ք.ա. IV դար) երկար ճանապարհորդությունների էին դուրս գալիս նոր տարածքներ ուսումնասիրելու համար։ Հին հռոմեացիները իրենց մեծ ներդրումն ունեցան զբոսաշրջության պատմության մեջ, կառուցելով ճանապարհների մի հոյակապ ցանց, որոնք նրանք կարող էին օրական ավելի քան 100 մղոն ձիերով ճանապարհորդել՝ Միջերկրական ծովի շրջանի հայտնի տաճարները տեսնելու համար, հատկապես բուրգերն ու հուշարձանները։

1822 թվականին Ռոբերտ Սմարթը Բրիստոլից (Մեծ Բրիտանիա) իրեն հայտարարեց որպես շոգենավի առաջին գործակալ։ նա սկսեց ուղևորներ գրանցել Բրիստոլի ջրանցքով ուղևորվող շոգենավերի համար, ինչպես նաև Դուբլին (Իռլանդիա)։

1841 թվականին Թոմաս Կուկը կազմակերպեց առաջին զանգվածային զբոսանքը Լենքաստերից մինչև Լոնդոնբորուգ, գնացքով, մեկ ուղևորի համար մեկ շիլինգ

արժողությամբ: Դա հրապարակայնորեն գովազդվող առաջին տուրիստական գնացքն էր, և Կուկը տեսարժան վայրերի զբոսաշրջության առաջին գործակալն էր:

Տուրիզմը, որպես զանգվածային սոցիալական երևույթ, ձևավորվեց միայն Երկրորդ աշխարհամարտից հետո: Տուրիզմի զարգացման պատմության մեջ կա չորս փուլ:

Առաջին փուլ՝ հին ժամանակներից մինչև 19-րդ դարի սկիզբ:

Երկրորդ փուլ՝ 19-րդ դարի սկզբից 20-րդ դարի սկիզբ:

Երրորդ փուլ՝ 20-րդ դարի սկզբից մինչև Երկրորդ աշխարհամարտ:

Չորրորդ փուլ՝ Երկրորդ աշխարհամարտից հետո մինչև օրս:

Զանգվածային տուրիզմը 20-րդ դարի երևույթ է, քանի որ այն ժամանակակից տեսք է ձեռք բերել հիմնականում ի շնորհիվ ավտոմեքենաների և ինքնաթիռների, որոնք ունեն ռեակտիվ շարժիչներ:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արդեն երկու հարյուրամյակ զբոսաշրջությունը համարվում է համաշխարհային տնտեսության արագընթաց զարգացող ճյուղերից մեկը: Զբոսաշրջության շարունակական զարգացումն էականորեն խթանում է ոչ միայն ծառայությունների ոլորտի զարգացմանը, այլև պայմաններ է ստեղծում նորանոր աշխատատեղերի առաջացման և բնակչության զբաղվածության առավել բարձր մակարդակ ապահովելու համար: Բազմաթիվ երկրների տնտեսության կառուցվածքում զբոսաշրջությունը համարվում է ամենաեկամտաբեր ճյուղը և նշանակալի տեղ է զբաղեցնում որոշ երկրների համախառն ներքին արդյունքի ձևավորման մեջ:

Հասարակության կողմից հանգստի հանդեպ ցուցաբերվող տարատեսակ հետաքրքրությունների հետևանքով առաջանում է զբոսաշրջության տեսակների բազմազանություն:

Յուրաքանչյուր մարդ յուրովի ընկալելով իր միջավայրը՝ տարբեր ակնկալիքներ է ունենում հանգստից: Սակայն զբոսաշրջության ոլորտը, բացի հանգստի կազմակերպումից,

մի շարք առաքելություններ էլ ունի։ Ոլորտը մեծ ազդեցություն է ունենում ազգային ավանդույթների վերականգնման գործում, բազմաթիվ ասպեկտներով նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը։

Պետության սոցիալական համատեքստում զբոսաշրջությունը տարբեր միջոցներով նպաստում է գյուղական համայնքների և տնտեսապես անբարենպաստ տարածաշրջաններում սոցիալական աշխուժության ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների՝ ճանապարհների, հանգստի համար նախատեսված համալիրների, առողջապահության, տրանսպորտի զարգացմանը։ Այս ամենի արդյունքում քաղաքամերձ շրջաններում բարձրանում է բնակչության կենսամակարդակը և բարելավվում է ապրելակերպը։

Զբոսաշրջության ոլորտի սոցիալական նշանակությունը բավականին մեծ է, քանի որ ոլորտի աճը զուգորդվում է հասարակության բարեկեցությամբ. զբոսաշրջության զարգացման միտումների հետ անմիջականորեն կապվում են բնակչության եկամուտները և տնտեսական ընդհանուր զարգացումները։ Բնակչության կենսամակարդակի և տեխնոլոգիաների զարգացման, ճանապարհորդելու ցանկության աճին զուգընթաց՝ ի հայտ են գալիս զբոսաշրջության նոր ուղղություններ՝ ակտիվացնելով մրցակցությունն այլ ուղղությունների միջև։ Դրանցից է ներկայումս մեծ հետաքրքրություն վայելող գյուղական զբոսաշրջությունը։

Հարկ է նշել, որ զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն է։

Այլ կերպ՝ զբոսաշրջությունը գործունեության տեսակ է, որը կարևոր նշանակություն ունի ժողովուրդների կյանքում, հզոր տնտեսական միջոց է, արվեստ, գործարարություն մարդկանց զվարճացնելու և սպասարկելու համար, որը միաժամանակ նպաստում է երկրի միջազգային ճանաչմանը՝ պատմամշակութային և տեղանքին բնորոշ առանձնահատկությունների հիման վրա։

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ագրոտուրիզմը նոր երևույթ չէ: Այն Եվրոպային ծանոթ էր արդեն 1970-ական թվականներին: Զարգացման ամենաբարձր մակարդակին հասավ Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, լայնորեն տարածված է Կիպրոսում, Խորվաթիայում, Լեհաստանում:

Շուկայի պահանջմունքները անընդհատ փոփոխվում են, և տուրինդուստրիայի անիվը պտտվում է՝ դրան համապատասխան առաջարկելով գյուղական տների, հյուղակների, քոթեջների բազմազան ընտրություն: Ֆրանսիայում գյուղական տուրիզմի բուռն զարգացումը պայմանավորված էր զարգացման հեռանկար չունեցող գյուղական շրջաններից բնակչության «գրոհով» դեպի խոշոր քաղաքներ: Սա դրդեց ղեկավարությանը պայմաններ ստեղծել ագրոտուրիզմի զարգացման համար: ներկայումս, ըստ տարբեր տվյալների, գյուղական տուրիզմը Եվրոպայում բերում է ամբողջ տուրինդուստրիայի եկամուտների մոտ 10-20%-ը:

Զբոսաշրջության հիմքում ճանապարհորդությունն է, առաջարկի և պահանջարկի փոխազդեցությունից ձևավորված իրական զբոսաշրջային արդյունքը, որն իր վրա է կրում տնտեսական և սոցիալական մի շարք նախապայմանների ներգործությունը: Լավագույն հանգիստը միջավայրի փոփոխությունն է, որի միջոցով հնարավոր է կտրվել առօրյա հոգսերից ու խնդիրներից: Ուղևորության նպատակային զբաղմունքից կախված՝ տարանջատվում են հանգստի կազմակերպման ձևերը, ակնկալիքների, տպավորությունների և գրավչությունների բազմազանությունը:

Հանգստի տարբեր ձևերն ընդլայնում են մարդու մտահորիզոնը, ապահովում են մասնակիցների հոգեկան և ֆիզիկական ուժերի վերականգնումը, գեղագիտական բավականությունը: Քաղաքներում մարդիկ անխուսափելիորեն գտնվում են ակտիվ, անհանգիստ, աղմկոտ միջավայրում: Քաղաքային թոհուբոհից հեռանալն ու բնության, գյուղական անդորրի մեջ հանգիստ կազմակերպելն այսօր բազմաթիվ երկրներում մեծ արդիականություն է վայելում: Ագրոտուրիզմն էլ հանդիսանում է նմանատիպ հանգստի վառ օրինակ:

Ագրոտուրիզմը իրենից ներկայացնում է քաղաքային պայմաններից դուրս անցկացված տուրիզմի ցանկացած տեսակ, որը վնաս չի հասցնում բնական համալիրներին:

Ագրոտուրիզմը կամ գյուղական տուրիզմը աշխարհի համարյա բոլոր երկրներում կարևոր տեղ է զբաղեցնում տուրիզմի ոլորտում, հանդիսանում է եկամտաբեր և դինամիկ զարգացող ուղղություն և աջակցություն է ստանում այդ երկրների կառավարությունների կողմից։

Տարբեր երկրների տուրիստների համար հանգիստը գյուղում ունի անփոփոխ պահանջարկ և պահանջված է ոչ պակաս, քան լողափնյա տուրիզմը։

Զբոսաշրջության հիմքում ճանապարհորդությունն է, առաջարկի և պահանջարկի փոխազդեցությունից ձևավորված իրական զբոսաշրջային արդյունքը, որն իր վրա է կրում տնտեսական և սոցիալական մի շարք նախապայմանների ներգործությունը։ Լավագույն հանգիստը միջավայրի փոփոխությունն է, որի միջոցով հնարավոր է կտրվել առօրյա հոգսերից ու խնդիրներից։ Ուղևորության նպատակային զբաղմունքից կախված՝ տարանջատվում են հանգստի կազմակերպման ձևերը, ակնկալիքների, տպավորությունների և գրավչությունների բազմազանությունը։

Հանգստի տարբեր ձևերն ընդլայնում են մարդու մտահորիզոնը, ապահովում են մասնակիցների հոգեկան և ֆիզիկական ուժերի վերականգնումը, գեղագիտական բավականությունը։ Քաղաքներում մարդիկ անխուսափելիորեն գտնվում են ակտիվ, անհանգիստ, աղմկոտ միջավայրում։ Ագրոտուրիզմն էլ հանդիսանում է նմանատիպ հանգստի վառ օրինակ։

Ագրոտուրիզմի առաջացման և զարգացման հիմնական պատճառը քաղաքաբնակների պահանջմունքն է՝ առանձնանալ բնության հետ, ծանոթանալ գյուղական կենցաղին։

Ընդ որում նրանց գրավում է ոչ միայն մրգեր, բանջարեղեն, միս և կաթնամթերք փորձելու, այլ նաև գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու, այսպես ասած՝ «անձամբ վարելահողի վրա կանգնելու» հնարավորությունը։

Տարբեր տեսական մշակումներում, մեթոդաբանական աղբյուրներում գյուղական զբոսաշրջությանը տրվում են բազմաթիվ սահմանումներ, որոնք ընդհանրացնելով, ստորև ներկայացվում են գյուղական զբոսաշրջության հիմնական առանձնահատկությունները։

Գյուղական զբոսաշրջությունը գյուղական միջավայրում հանգստի կազմակերպման, գործարար և այլ նպատակներով (ճանապարհորդության հիմնական նպատակը ժամանման վայրում վճարովի աշխատանքային գործունեությունը չէ), առավելագույնը մինչև մեկ տարի

անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն է։

Համաձայն Ժ. Ու. Քլոսի, գյուղական զբոսաշրջությունը հասկացություն է, որն իր մեջ ներառում է այն ողջ զբոսաշրջային գործունեությունը, որն իրականացվում է զարգացող գյուղական միջավայրում։

Այս տեսակի զբոսաշրջության հիմնական նպատակը համարվում էր գյուղական համայնքներում կազմակերպված գործունեության միջոցով պահպանել, վերակենդանացնել տեղական սովորույթները, արհեստները և զարկ տալ ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը։

Գյուղական զբոսաշրջությունը բաղկացած է հանգստի կազմակերպման մի շարք տեսակներից.

- ագրոզբոսաշրջություն,
- համայնքային էկոզբոսաշրջություն,
- էթնոզբոսաշրջություն,
- սպորտային զբոսաշրջություն,
- գաստրոնոմիկ զբոսաշրջություն
- և ուղղակի հյուրընկալության կազմակերպում գյուղական միջավայրում։

Ագրոտուրիզմ ասելով հասկանում ենք մաքուր օդ, առողջ քուն, ֆիզիկական ակտիվություն, բազմաթիվ տպավորություններ, նոր ծանոթություններ, ինչպես նաև մի նոր աշխարհ բացահայտելու և բոլորովին այլ կյանքով ապրելու հնարավորություն։ Գյուղացու սրտաբաց և ջերմ ընդունելությունը, անհատական մոտեցումը, հոգատարությունը, էկոլոգիապես մաքուր սնունդն ու ապահովության զգացումն երաշխավորում են անվրդով հանգիստ։

Ագրոտուրիզմն ընտանեկան բիզնես է, որտեղ հաջողությունը կախված է ընտանիքում ապրող բոլոր անդամների համակարգված աշխատանքից։

Զբոսաշրջության այս տեսակի առաքելությունը կայանում է նրանում, որ գյուղական միջավայրում հյուրընկալության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսներն ուղղորդվում են դեպի այցելուների հանգիստ հոգեվիճակի ապահովմանն ու յուրովի ապրելակերպի հետ ծանոթանալու հետաքրքրությունների բավարարմանը։

Հարկ է նշել, որ Եվրոպական միության (ԵՄ) 27 անդամ երկրների բնակչության 56%-ն ապրում են գյուղական համայնքներում, դրանք զբաղեցնում են ամբողջ ԵՄ տարածաշրջանի 91%-ը: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ գյուղական տարածաշրջանների զարգացման քաղաքականության մշակումներն առավել քան կարևոր են: Հատկապես անհրաժեշտություն է առաջանում ուշադրությունը սևեռել գյուղական և քաղաքային բնակավայրերի համաչափ զարգացմանը:

Ներկայումս մեծ ուշադրության են արժանանում նաև բնական միջավայրի ճիշտ կառավարման և օգտագործման խնդիրները, որոնց լուծումները գյուղական համայնքներում առաջացնում են ժամանակի հրամայական հանդիսացող տնտեսական դիվերսիֆիկացիաներ:

Նմանատիպ գործընթացների հիման վրա էլ գյուղական ագրոտուրիզմը տարբեր միջոցներով ազդեցություն է ունենում գյուղական միջավայրի զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: Ոլորտում ստեղծված աշխատատեղերը և դրանց արդյունքում ձևավորված եկամուտները հանդիսանում են տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելու շարժառիթ:

Գյուղական համայնքներում զբոսաշրջության զարգացման բազմաթիվ նախադրյալներ կան, և դրանք իրենց առանձնահատկություններով կարող են օգտագործվել զբոսաշրջության ոլորտի զարգացման հեռանկարային նախագծերում: Դրանք նպաստում են գյուղական համայնքներում՝

- նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- զբոսաշրջության ոլորտում գործարար միջավայրի ակտիվացմանը,
- ներդրումային դաշտի ձևավորմանը,
- բնակչության կենսամակարդակի աճի ապահովմանը,
- մշակութային գործունեության ակտիվացմանը,
- այլ ճյուղերի զարգացմանը՝ կապված զբոսաշրջային ծառայությունների ստեղծման և մատուցման հետ:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՆԱՉ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Զբոսաշրջությունը տնտեսության այն ոլորտներից է, որում կանաչ միջավայրի պահպանման և օգտագործման հիմնահարցերը առավել քան արդիական են համարվում: Ըստ ՄԱԿ-ի «Կանաչ տնտեսություն» զեկույցի՝ զբոսաշրջության ոլորտը կանաչ միջավայրի բարելավման գործում զգալի ներդրումներ ունի: Դրանք կապված են էներգիայի արդյունավետ օգտագործման, ջրախնայողության, կոյուղիների կարգավորման և այլ կենցաղային-տնտեսական գործոնների հետ, որոնք նպաստում են համեմատաբար աղքատ համայնքային բնակչության կենսամակարդակի բարձրացման ու աշխատատեղերի ստեղծման գործընթացներին և դրական ազդեցություն են ունենում զբոսաշրջության հետ առնչվող տնտեսության հարակից ճյուղերի վրա:

Տարեցտարի զբոսաշրջային ժամանումներն ավելանում են, իսկ ոլորտն իր ազդեցությունն է ունենում Երկիր մոլորակի վրա: Կլիմայական փոփոխությունները, բնական միջավայրի և մթնոլորտի աղտոտվածությունը ավելացնում են դեպի կանաչ, մաքուր միջավայր նախընտրողների պահանջարկը: Դա նպաստում է շրջակա միջավայրի կայունության, կենսաբազմազանության պահպանության, ջրամատակարարման և թափոնների կառավարման գործընթացների բարելավման հանդեպ ուշադրության մեծացմանը: Զբոսաշրջությունը և էկոլոգիական կայունությունն արագորեն դառնում են համագործակիցներ:

Կանաչ զբոսաշրջությունը, որը սահմանվում է նաև որպես էկոզբոսաշրջության բաղադրիչ, զբոսաշրջության ամենաարագ զարգացող ուղղություններից է: Կանաչ զբոսաշրջության համար որպես գրավչության օբյեկտ՝ հանդիսանում է Երկրի լանդշաֆտը, մաքուր միջավայրը, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանությունը և այլն:

«Կանաչ զբոսաշրջությունը» ենթադրում է զբոսաշրջային արդյունաբերության մեջ էկոլոգիական մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում՝ չնայած որ զբոսաշրջության բնագավառում «կանաչ» ձևակերպումը սակավ է օգտագործվում: Գյուղական կանաչ զբոսշրջությունն առավել տարածված է ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում: Եվրոպացիների համար վաղուց հայտնի է, որոր գյուղում հանգստի կազմակերպումը, եթե նույնիսկ այդքան շահութաբեր չէ, որքան հայտնի ծովային և լեռնադահուկային բուժավայրերում (կուրորտներում), ապա, ամեն դեպքում կայուն եկամուտ կարող է ապահովել:

Գյուղական կանաչ զբոսաշրջությունը բազմակողմանի երևույթ է: Այն պետք է դիտարկել որպես գյուղական բնակչության եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացիայի միջոց և որպես գյուղական տարածքների ու գյուղական ենթակառուցվածքի համալիր զարգացման բաղադրամաս, ինչպես նաև՝ գյուղական համայնքներում աղքատության վերացման ռազմավարության գործոն: Այդ պատճառով զարգացող երկրներում գյուղական կանաչ զբոսաշրջությունը պետության կողմից ամեն կերպ աջակցվում և խրախուսվում է: Այս բնագավառում պարզեցված են սուբյեկտների հնարավոր բոլոր առավելությունները, կիրառվում են նաև հարկային արտոնություններ:

Կանաչ զբոսաշրջությունն առաջարկում է վստահելի, անկախ ձեռներեցություն՝ առաջնորդվելով կայունության պահպանման սկզբունքներով: Ապրուստի միջոցների հայթհայթման հնարավորությունները գյուղական միջավայրում սահմանափակ են, և զբոսաշրջության այս տեսակի զարգացումը դառնում է տնտեսական և սոցիալական խնդիրների թեթևացման միջոցներից մեկը: Այս ձեռներեցությամբ զբաղվողներին ավելի քիչ ներդրումներ են հարկավոր: Ներկայիս պայմաններում, երբ ամբողջ աշխարհը սկսել է պայքարել գենետիկորեն աճեցված, ոչ մաքուր, այսպես կոչված՝ «բնությունից կտրված» սննդի դեմ, գյուղական զբոսաշրջությունը հնարավորություն է տալիս որոշ ժամանակ զերծ մնալ այդպիսի վնասակար ազդեցություններից:

Զբոսաշրջության մի քանի ուղղություններ գրեթե նույն նպատակն են հետապնդում, միևնույն առաքելությանը միտված ծրագրեր են իրականացնում: Այդպիսի համանման ուղղություններ են կանաչ զբոսաշրջությունը, էկոտուրիզմը, կայուն զբոսաշրջությունը և էլի մի շարք տեսակներ (վայրի բնության զբոսաշրջություն և այլն): Այս ուղղություններն որոշ տարբերակիչներով կիրառվում են մասնագիտական ասպարեզում:. Հարկ է նշել, որ պատմականորեն դրանց սկզբնաղբյուրը համարվում է կանաչ զբոսաշրջությունը:

Գյուղական զարգացող կանաչ զբոսաշրջությունը տարածում է իր ազդեցությունը ամբողջ աշխարհում՝ պահպանելով շրջակա միջավայրը գալիք սերունդների ժառանգման համար:

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԵՋ

Ագրոտուրիզմի կազմակերպման ժամանակ հաճախ հարկ է լինում այն զուգորդել զբոսաշրջության այլ ձևերի հետ։

Ագրոտուրիզմի փաթեթ նախագծելիս կազմակերպիչները գերադասում են համադրել զբոսաշրջության մի քանի ձևեր, օրինակ՝ գաստրոնոմիկ, պատմամշակութային, ճանաչողական, արկածային, սպորտային, իրադարձային զբոսաշրջություն և այլն։

Զբոսաշրջության տեսակների բազմազանությունը պայմանավորված է մարդուն ճամփորդության մղող շահադրդման ներքին որոշ գործոններով։ Հարկ է նշել, որ զբոսաշրջության ձևերը տարանջատվում են ըստ արտաքին պատճառների կամ ազդեցությունների։ Ըստ արտաքին չափորոշիչների՝ գոյություն ունեն զբոսաշրջության ձևերը դասակարգելու բազմաթիվ տարբերակներ, մասնավորապես՝

- ըստ սեզոնայնության
- ըստ կազմակերպման ձևի
- ըստ զբոսաշրջիկի տարիքի
- ըստ տրանսպորտային միջոցի
- ըստ զբոսաշրջիկի ծագման
- և այլն։

Ագրոտուրիզմի հիմնական նպատակներից է համարվում տվյալ տարածաշրջանում կազմակերպվող զբոսաշրջային գործունեության խսիտ սեզոնայնության սահմանների ընդարձակումը։ Կախված սեզոնայնությունից՝ ընդգծված տարանջատվում են ձմեռային և ամառային զբոսաշրջային գործունեությունները։ Այսպիսի տարանջատումը հնարավորություն է տալիս ուսումնասիրել զբոսաշրջության պահանջարկի դինամիկան ըստ եղանակների։ Տարվա այն եղանակը, որին բաժին է ընկնում իրականացված ճանապարհորդությունների գերակշիռ մասը, անվանում են զբոսաշրջային սեզոն։

Կախված զբոսաշրջության կազմակերպման ձևի չափորոշիչից՝ տարբերակում են խմբային և անհատական զբոսաշրջության ձևերը։ Խմբային զբոսաշրջությունը ենթադրում է, որ այն ստանդարտացված է. ձևավորված են զբոսաշրջային ծառայությունների ժամկետները, համալիրը, երթուղին, զբոսաշրջային կենտրոնները և այլն։ Անհատական զբոսաշրջության դեպքում զբոսաշրջիկն այն կազմակերպում և իրականացնում է

ինքնուրույն։ Գյուղական զբոսաշրջության կազմակերպման ժամանակ մեծ խմբային այցելությունները մասսայականություն չեն վայելում։ Այն հիմնականում ընտանեկան հանգստի համար է և կազմակերպվում է հնարավորինս ինքնուրույն՝ առանց միջնորդ օղակների։

Զբոսաշրջային շուկայում ըստ ճանապարհորդողների տարիքային սանդղակի, տարանջատում են զբոսաշրջիկների հետևյալ խմբերը՝

- ծնողների հետ ճանապարհորդող երեխաներ,
- երիտասարդներ (15-24 տարեկան),
- տնտեսապես ակտիվ և երիտասարդ մարդիկ (25-44 տարեկան),
- միջին տարիքի տնտեսապես ակտիվ մարդիկ (45-64 տարեկան),
- թոշակառուներ (65 տարեկան և բարձր)։

Ագրոտուրիզմի կազմակերպման մեջ հարկավոր է կարևորել այս չափորոշիչը, քանի որ գյուղական հանգստի փաթեթ ձևավորելիս դրանով է պայմանավորում զբոսաշրջության այլ տեսակների հետ համատեղելիությունը։

Ըստ տրանսպորտային միջոցի՝ ագրոտուրիզմի մեջ առավել տարբերակվում են իրենց կամ վարձակալված մեքենայով և հանրային տրանսպորտով ճանապարհորդող զբոսաշրջիկներ։

Ըստ զբոսաշրջիկների ծագման չափորոշիչի՝ տարբերակում են, ներքին, արտագնա և ներգնա զբոսաշրջություն։ Այս դեպքում «ծագում» բառը նշանակում է ոչ թե անձի բնօրրան, այլև ճանապարհորդի մշտական բնակության վայր։ Ըստ այդմ՝ որոշակի տարածաշրջանի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ տարբերակում են զբոսաշրջության հետևյալ տեսակները.

- ներքին զբոսաշրջություն (որևէ երկրում բնակվող քաղաքացիների իրականացրած ճանապարհորդությունն է, իրենց երկրի սահմաններում (բազմաթիվ երկրներում գյուղական զբոսաշրջությունը զարգանում է ներքին զբոսաշրջության հաշվին),
- արտագնա զբոսաշրջություն (որևէ երկրում բնակվող քաղաքացիների ճանապարհորդությունն է դեպի մեկ այլ երկիր (գյուղական զբոսաշրջության կազմակերպման ժամանակ որպես արտագնա ուղղություն նախընտրելի են

հարևան երկրները, որով էլ զարկ են տրվում տարածաշրջանային այցելությունների զարգացմանը),

- ներգնա զբոսաշրջություն (այլ երկրի քաղաքացիների համար ընդունող երկրում հանգիստ կազմակերպելու տեսակն է (անկախ զբոսաշրջության կազմակերպման ձևից՝ սա համարվում է ամենաեկամտաբեր տեսակը զբոսաշրջիկ ընդունող երկրի համար)։

Պարզորոշ տեսանելի է, որ ագրոտուրիզմի կազմակերպումը զբոսաշրջության ձևերի դասակարգման մեջ ունի իրեն բնորոշ առանձնահատկություններ։

Գյուղական զբոսաշրջության պահանջարկն արտահայտվում է քաղաքամերձ շրջաններում զբոսաշրջային ծառայությունների քանակության տեսքով։ Իսկ գյուղական զբոսաշրջության արտադրանքը տեղանքին բնորոշ այն զբոսաշրջային ծառայությունների ամբողջությունն է, որը տվյալ գնի դեպքում պատրաստ են վաճառել զբոսաշրջային արտադրանք թողարկողները։

Գյուղական զբոսաշրջության շուկայում գործող առաջարկի և պահանջարկի դրսևորմամբ է պայմանավորված այս դասակարգիչների առկայությունը, քանի որ յուրաքանչյուր խումբ իր պահանջմունքները բավարարելու հատուկ վերաբերմունք է ակնկալում, որոնց դիմաց նրանք ունակ են և պատրաստ են վճարել։

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Ներկայումս ամբողջ աշխարհում զբոսաշրջային ենթակառուցվածքների այլընտրանքային տեսակների մեջ մեծ պահանջարկ են վայելում այնպիսի հաստատություններ, որոնք գտնվում են քաղաքային աղմուկից հեռու։ Ժամանակակից մարդու ապրելակերպի անհանգիստ առօրյան, լարվածությունը հանգեցնում են քաղաքամերձ շրջաններում հանգստի համար նախատեսված ենթակառուցվածքների հանդեպ հետաքրքրության աճին։ Բարեկարգ սպասարկման ենթհամակարգերով գյուղական միջավայրը հոգեկան բավարարվածություն է ստեղծում մարդկանց մոտ և օգնում հաղթահարել դժվարությունները՝ կոփելով մարդու օրգանիզմը, ֆիզիկապես ու հոգեպես հանգստի վիճակ ապահովելով։

Գյուղական զբոսաշրջություն նախընտրողները գյուղական համայնքների սպասարկման ենթահամակարգերում չեն պահանջում ամենաբարձր մակարդակով իրականացվող սպասարկում, սակայն որոշ նորմեր հարկավոր է պահպանել: Թեև վերջին տասնամյակում զբոսաշրջության այս տեսակի հանդեպ ցուցաբերվող մեծ ուշադրությունը հանգեցրել է վերոնշյալ հաստատությունների որակական փոփոխությունների առաջընթացին:

Զբոսաշրջության ժամանակակից արդյունաբերությունը կազմակերպական առումով իր գործունեության մեջ ներառում է մի շարք տնտեսվարող սուբյեկտների, որոնք անփոխարինելի դեր ունեն նաև գյուղական զբոսաշրջության կազմակերպման ժամանակ: Դրաք են՝

- զբոսաշրջային կազմակերպությունները (տուրօպերատորներ և տուրգործակալներ),
- որոնք զբաղվում են զբոսաշրջային արտադրանքի մշակմամբ և իրացմամբ,
- տեղաբաշխման ծառայություններ մատուցող կազմակերպությունները (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, զբոսաշրջային տներ, մոթելներ, քեմփինգներ և այլն),
- սննդի մասնագիտացված կազմակերպությունները (ռեստորաններ, սրճարաններ և այլն),
- տրանսպորտային մասնագիտացված կազմակերպությունները (ավիաընկերություններ, երկաթուղային, ավտոմոբիլային և ծովային տրանսպորտի կազմակերպություններ),
- գնումների համար նախատեսված առևտրային կազմակերպությունները (հուշանվերների խանութներ, շուկաներ և այլն),
- հանգստի և զվարճանքի կազմակերպությունները (կինոթատրոններ, լողավազաններ, զվարճանքի վայրեր և այլն),
- զբոսաշրջության ոլորտում գործող պետական կազմակերպությունները,
- և այլն:

Գյուղական զբոսաշրջության տուրերը հաճախ զուգորդվում են տեղանքին առանձնահատուկ զբաղմունքներով: Այդ գործունեությունն իրականացնող տնտեսություններին կից ստեղծվում են վերոնշյալ ենթահամակարգերի տարրերից, և

ամենակարևորը, որ դրանցում ստեղծում են իրենց տեղանքին բնորոշ կոլորիտ, ինչն էլ ավելի է մեծացնում գյուղական զբոսաշրջության գրավչությունը։

Եվրոպական որոշ երկրներում գյուղական զբոսաշրջությունը դարձել է գյուղական ենթակառուցվածքների դինամիկ զարգացման, ֆերմերների զբաղվածության ապահովման և ֆինանսավորման լուրջ աղբյուր, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրման ու մատուցման գրավական։ Գյուղական համայնքներում սպասարկման ենթահամակարգերը ճամփորդությունների կազմակերպման ծառայություններ մատուցելով՝ գյուղացու եկամտի կարևոր աղբյուրներից են հանդիսանում, օրինակ՝ գյուղական բնակավայրերում առկա արհեստանոցներում, հուշարձաններին կից վաճառակետերում, տեղական արհեստների նմուշների վաճառքը նպաստում է հուշանվերների և զբոսաշրջային նշանակության այլ ապրանքների արտադրությամբ զբաղվող ենթաճյուղերի մասնագիտացմանը։ Այս հանգամանքը հնարավորություն է տալիս գյուղերում առևտրային կազմակերպությունների ակտիվացմանը, գյուղական ընտանիքին ֆինանսական աջակցմանը։

Գյուղական միջավայրում գործող սպասարկման ռեսուրսներին հարկավոր է համապատասխան պետական հոգածություն, օրինակ՝ վերահսկման մեխանիզմների և տարաբնույթ կազմակերպությունների գործունեության կոորդինացում, զբոսաշրջության ոլորտի համար բարենպաստ պայմանների ստեղծում, գյուղական ենթակառուցվածքների և շրջապատող միջավայրի հանդեպ հասարակական հայացքների ձևավորում և այլն։

Սակայն գյուղական զբոսաշրջության տեսանկյունից երկրի մասին ձևավորված ընդհանուր պատկերը պետք է ամրապնդված լինի նաև այլ գործոններով, ինչպիսիք են՝ տվյալ երկրի գյուղական զբոսաշրջային ռեսուրսների համապատասխանությունը միջազգային զբոսաշրջային շուկայի պահանջներին, գյուղական բնակավայրերում տարբեր երկրներից ժամանած զբոսաշրջիկներին սպասարկելու կարողությունները, սպասարկման ենթակառուցվածքների ընդլայնումը և բարելավումը, արդյունավետ գովազդը և այլն։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցած դարի վերջին տասնամյակներում գյուղական տուրիզմը եվրոպական երկրներում դարձավ զարգացման մի նոր ուղղություն: Եվրամիությունը խրախուսում է տուրիզմի այս տեսակի զարգացումը՝ ԵՄ տնտեսական քաղաքականության որոշ բացասական հետևանքները չեզոքացնելու և գյուղական ժառանգությունը պահպանելու նպատակով: Ներկայումս նկատվում է տուրիստական շուկայի ընդլայնման ու գլոբալացման հստակ արտահայտված տենդենցը: Սա պահանջում է բարձր որակի տուրիստական արտադրանքի պատրաստում և կազմակերպում պրոֆեսիոնալ մակարդակով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է տուրիստական ավանդույթներին չտիրապետող գյուղական տնտեսություններին ու տեղական բնակչությանը համապատասխանեցնել այդ տենդենցներին, որպեսզի նրանք մասնակցեն որակավորված տուրօպերատորների և ազգային տուրիստական կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումներին: Ագրոտուրիզմի զարգացման ԵՄ հիմնական նպատակը կայանում է գյուղական տնային տնտեսությունների ուղղակի եկամուտներն ապահովող տուրարտադրանքի զարգացման, գյուղական բնակավայրերում բնակչության կենսամակարդակի մշտական բարելավման, ինչպես նաև գյուղերում պատմական ժառանգության պահպանման մեջ:

ԵՄ տուրիստական հոսքը տարեկան կազմում է ավելի քան 370 մլն. պոտենցիալ տուրիստ, որոնք ճամփորդում են ԵՄ երկրներում: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ արևմտաեվրոպացիների 68%-ն իր հանգիստն անց է կացնում իր սեփական երկրում, իսկ 20%-ը՝ ԵՄ այլ երկրներում: Ընդհանուր առմամբ արևմտաեվրոպացիների 90%-ը արձակուրդի ժամանակ մնում է Եվրոպայում: Նրանցից 25%-ը (4 տուրիստից 1-ը) իր հանգիստն անց է կացնում գյուղական վայրերում՝ ղեկավարվելով տնտեսելու տեսանկյունից, ինչպես նաև բնական միջավայրի որակներով: ԵՄ-ում ագրոտուրիզմի համար տեղերը գերազանցում են 600 000-ը: Այս տվյալում Շվեյցարիայի բաժինը կազմում է 20%, Ավստրիայինը՝ 10%, Գերմանիայինը և Նիդերլանդներինը՝ 8%, Ֆրանսիայինը՝ 4%, Իտալիայինը՝ 2%:

Իսպանիայում, որը համարվում է աշխարհի ամենազարգացած տուրիստական կենտրոններից մեկը, ագրոտուրիզմը թույլ է զարգացած, և գյուղատնտեսական հողատարածքների միայն 0,5%-ն է օգտագործվում ագրոտուրիստական նպատակներով:

ԵՄ շրջանակներում տուրիզմն իրենից ներկայացնում է տնտեսության առանձին ուղղություն: Իրավական դաշտը ներկայացված է ԵՄ պայամանգրի 238 հոդվածով և համարվում է բավարար նրանց համար, ովքեր համաձայն չեն ԵՄ-ի միջամտությանը տուրիստական ոլորտում, որը կարող է իրականցվել ազգային մակարդակով: Գոյություն ունեն հակադիր կարծիքներ, համաձայն որի տուրիստական ոլորտի տնտեսական նշանակությունը այնքան է մեծացել, որ առաջացել է տուրիզմի եվրոպական ինդուստրայի մրցունակության հետ կապված միջոցառումների իրականացման սուր անհրաժեշտություն:

Երկիր	**Ագրոտուրիզմով զբաղվող հիմնական կազմակերպություններ**	**Ընդունելության մասնագիտացված կառույցներ**	**Տեղանքի պայմանական անվանումը**	**Գներ**
Ավստրիա	Ագրոտուրիստական կազմակերպություններ (տեղական մակարդակով) Կազմակերպությունների Ղեկավարման կենտրոններ (ռեգիոնալ մակարդակով)	Մանր հյուրանոցներ, գյուղական տնտեսություններ, Ագրոտուրիստական պանսիոններ, Տեղավորման միջոցներ տեղացիների մոտ	Հանգստի տուրիստական գյուղեր, Հանգստի տուրիստական բազաներ	Ցածր
Բելգիա	Բալլոնիայի միջին դասերի միություն, Բալլոնիայի «Giteurilor» ֆեդերացիա, Արևելյան անտառային տեղանքների տուրիստական օֆիս	Մանր հյուրանոցներ Ճամբարային տեղանքներ, ագրոտուրիստական պանսիոններ	Հանգստայան գյուղեր Տուրիստական գյուղեր	Միջին
Բուլղարիա	«Բալկանտուրիստ» կազմակերպություն	Ագրոտուրիստական պանսիոններ Գյուղական տնտեսություններ Տեղավորման միջոցներ տեղացիների մոտ	Տուրիստական գյուղեր	Ցածր

Դանիա	Տուրիզմի ազգային գրասենյակ	Լեռնային բազաներ Մոթելներ Գյուղական տնտեսություններ Ճամբարային տեղանքներ	Տուրիստական գյուղեր	Ցածր
Շվեդիա	Տուրիզմի շվեդական ազգային կազմակերպություն	Մանր հյուրանոցներ Ագրոտուրիստական պանսիոններ Տեղավորման միջոցներ տեղացիների մոտ	Հանգստայան գյուղեր Հանգստի գյուղական ճամբարներ	Բարձր
Գերմանիա	Գյուղատնտեսության և ագրոտուրիզմի կազմակերպման աշխատանքային խումբ Ագրոտուրիզմի գերմանական կազմակերպություն Հասարակական կարծիքի ստիմուլավորման կազմակերպություն	Մանր հյուրանոցներ Ագրոտուրիստական պանսիոններ Գյուղական տներ Մանկական ճամբարներ	Հանգստայան գյուղեր	Միջին
Ֆրանսիա	Տուրիստական գյուղերի գլխավոր ասոցիացիա Ազգային դաշնություն «Cleconfort» կազմակերպություն	Մանր հյուրանոցներ Ճամբարային տեղանքներ Ագրոտուրիստական պանսիոններ Գյուղական տներ Մանկական ճամբարներ	Հանգստայան գյուղեր Մանկական ճամբարներ Տուրիստական գյուղեր	Միջին
Իտալիա	«Anagritur» կոնսորցիում «Terra Nostra» կազմակերպություն «Turismo Verdes» կազմակերպություն	Մանր հյուրանոցներ Ճամբարային տեղանքներ Ագրոտուրիստական պանսիոններ Տեղավորում տեղացիների մոտ	Տուրիստական գյուղեր	Միջին
Իռլանդիա	Ազգային տուրիստական գրասենյակ	Մանր հյուրանոցներ Ճամբարային հատվածներ Ագրոտուրիստական պանսիոններ Գյուղական տներ	Տուրիստական գյուղեր	Ցածր

Մեծ Բրիտանիա	Ազգային տուրիստական գրասենյակ	Մանր հյուրանոցներ Ճամբարային տեղանքներ Ագրոտուրիստական պանսիոններ Գյուղական տներ	Հանգստյան գյուղեր	Միջին
Լեհաստան	Տուրիստական ինֆորմացիոն կենտրոն (ազգային մակարդակով) նախաձեռնող կոմիտե (լոկալ մակարդակով)	Ագրոտուրիստական պանսիոններ Գյուղական տնտեսություններ Տեղավորման միջոցներ տեղացիների մոտ	Հանգստյան գյուղեր	Ցածր
Ռումինիա	Գյուղական, էկոլոգիական և մշակութային տուրիզմի ազգային ասոցիացիա	Ճամբարային տեղանքներ Ագրոտուրիստական պանսիոններ Գյուղական տներ Տեղավորման միջոցներ տեղացիների մոտ	Տուրիստական գյուղեր	Ցածր

Աղբյուր՝ Расчеты Департамента по развитию туризма в рамках прогнозов Всемирной туристической организации

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Այս տարածաշրջանը համարվում է գյուղական տուրիզմի կարևորագույն կենտրոններից մեկը, քանի որ այստեղ են գտնվում գյուղական տարաբնակեցման գերակշռող համակարգ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հնդկաստանը, Չինաստանը:

Տուրիզմը Հնդկաստանի տնտեսության հիմնական ճյուղն է, որն ապահովում է աշխատատեղեր և բարելավում բնակչության կենսամակարդակը: Բացի այդ, կարելի է նշել, որ գյուղատնտեսությունը Հնդկաստանի բնակչության հիմնական զբաղմունքն է: Հնդկական գյուղերում անցկացվում են բազմաթիվ փառատոններ, որոնք տուրիստներ են գրավում ինչպես երկրի տարածքից, այնպես էլ աշխարհի բոլոր անկյուններից: Հնդկական գյուղի կենսակերպը ներառում է կրթություն և գիտելիքներ գյուղական կյանքի մասին: Հնդկական գյուղերի իր պարզությամբ և գրավչությամբ առանձնանում է Չանդիգարխա շրջանը:

Տուրկազմակերպություններն ու տուրօպերատորները ձգտում են բարելավել այդ գյուղերի սանիտարահիգիենիկ վիճակը։

Վերջին տարիներին Չինաստանի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում ագրոտուրիզմին, մշակվել է ռազմավարություն, համաձայն որի կատարելագործվում են գյուղական պայմանները և բարձրացվում տեղացիների եկամուտները։ Ըստ 2011թ. վերջին տվյալների , Չինաստանում ընդհանուր առմամբ հաշվվում է 1,5 մլն գյուղական տներ և 20 հազարից ավելի խոշոր պարկեր՝ նախատեսված գյուղական տուրիզմի համար։ 2011թ. մայիս ամսին բացվել է առաջին գյուղական հյուրանոցը Սիչուան նահանգում։ Այս տարածքում գյուղական տուրիզմն անշուշտ կապված է Դուցզանյանյան ամբարտակի հետ, որը գոյություն ունի 2000 տարի և գտնվում է Յունեսկոյի պաշտպանության տակ՝ որպես այդ ժամանակների ամենախոշոր ինժեներական կառույց։ մեկ օրվա արժեքը գյուղական հյուրանոցում արժե 100 յուան։ Համաձայն կանխատեսումների, տուրիստական կոմպլեքսների կառուցումը մեծացնելու է ֆերմերների եկամուտը 2-3 անգամ։

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ագրոտուրիզմի դրական սոցիալական բաղադրիչը գյուղերում բնակիչների ներգրավված լինելն է ծառայության ոլորտում։

Այդ իսկ պատճառով այս ուղղության զարգացումը կարելի է համարել ընկճված գյուղական շրջանների զարգացման ճանապարհ, որը հնարավորություն կտա կանգնեցնել գյուղական տարածքների «քայքայումը», որն առաջանում է բնակչության մշտական արտահոսքից, վերջինիս հիմնական պատճառն աշխատանքի բացակայությունն է ։

Գյուղական տուրիզմի շրջանակներում տրամադրվող ծառայությունները սովորաբար իրենց մեջ ներառում են.

- տեղավորում հարմարավետ մասնավոր առանձնատներում
- պատվերով էկոլոգիապես մաքուր սնունդ
- ծանոթություն շրջանի պատմության հետ
- սնկեր և հատապտուղներ հավաքելու արշավներ
- մասնակցություն ազգային ծեսերի ։

Մի քանի զբոսաշրջային արտադրանքների հեղինակներ և մշակողներ տուրիստական ճանապարհորդությունների այս տեսակը համարում են ինքնուրույն տեսակ, ինչպիսին են օրինակ ֆոլկլորային տուրերը, որոնց նպատակն է ծանոթությունը ժողովրդական բանավոր ստեղծագործությունների հետ՝ հենց դրանց գոյության վայրերում: Այս տուրերի էքսկուրսիոն ծրագրերը ներառում են այցելություններ ազգագրական թանգարաններ, համերգներ բանահյուսական խմբով, բանահյուսական փառատոններ, զանգվածային ազգային տոնակատարություններ՝ ըստ վավերական ծեսերի: Ֆոլկլորային անիմացիոն ծրագրերի առանձնահատկությունը դրանց իրականացումն է բնության պայմաններում:

Հատկանշական է, որ որոշ ինստիտուտներ խթանում են ագրոտուրիզմի զարգացումը Հայաստանում: Գերմանիայի Բնության Պահպանության Միության (NABU) հայաստանյան մասնաճյուղը և ԱԿԲԱ Ֆեդերացիան համատեղ 2020թ-ին վերսկսել են «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ծրագիրը: Այն ուղղված է խթանել գյուղական համանքներում տուրիզմի զարգացմանը և նոր հնարավորություններ է տալիս տեղացիներին ստեղծել կամ զարգացնել իրենց գաղափարները այդ ոլորտում:

Ագրոտուրիզմը մեր օրերում սրընթաց զարգացում է ապրում և օրեցօր էլ ավելի շատ զբոսաշրջիկներ նախընտրում են վայելել իրենց հանգիստը գյուղական միջավայրում: Հայաստանն էլ իր հերթին առանձնանում և աչքի է ընկնում իր յուրօրինակ միջավայրով, հուշարձաններով և գյուղական կոլորիտով: Ագրոտուրիզմը ունի հսակայական պոտենցիալ Հայաստանում լինելու տուրիստական ծառայությունների մատուցման առաջատար ոլորտներից մեկը:

«Գյուղական Տուրիզմի Զարգացման» ծրագրի շրջանակներում իրականացվում են հոտնյալ միջոցառումները՝

1. Էկո-արահետի կառուցում
2. Դրամաշնորհային մրցույթներ
   - ***Ֆերմերի կյանքը*** (Տվյալ դրամաշնորհը նախատեսված է այն ամրդկանց համար, ովքեր ունեն հետաքրքիր գաղափարներ զարգացնելու տուրիզմը իրենց տարածաշրջանում, օգտագործելով բնության, պատմամշակութային կամ այլ առնձնահատկություններ: Այդպիսի օրինակներ են գինու համտեսի սրահները, լավաշի պատրաստման մաստեր-կլասերը, հովիվների հետ արշավները և այլն:

Ծրագրում պետք է շեշտադրումը լինի հենց գյուղական միջավայրի պահպանության և ներկայացման վրա)։

- ***Նոր կառուցվող հյուրատուն*** (Դրամաշնորհը նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր ունեն տուն, որը կարող է դառնալ հյուրատուն և հնարավորություն կունենա ընդունել զբոսաշրջիկների)։
- ***Գործող հյուրատուն*** (Դրամաշնորհը նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր ունեն արդեն իսկ գործող հյուրատուն և ցանկանում են ընդլայնել կամ էլ ստեղծել հետաքրքիր անկյուն զբոսաշրջիների համար)։

3. Շահառուների համար խորհրդատվություն և մարքեթինգային արշավ։

➢ **Էկո- արահետի կառուցում**

Ներկայումս էկո-արահետները համարվում են լավագույն միջոցներից մեկը կազմակերպելու ակտիվ հանգիստը և միևնույն ժամանակ ծանոթանալու տեղանքի առանձնահատկություններին։ Այդ նպատակով նախատեսվում է մեկ արահետի կառուցում, որը հնարավորություն կտա ոչ միայն պահպանել մեր բնական արժեքները, այլ նաև ակտիվորեն զարգացնել զբոսաշրջությունը։

Բացի այս, Հայաստանի տարբեր անկյուններում ևս կազմակերպվում են ագրոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ։ Այդ անկյուններից մեկն էլ Գեղարքունիքի մարզի Գետիկ գյուղն է։ Մի քանի գյուղացիների ջանքերի համատեղումով Գետիկը դարձել է Հայաստանում ագրոտուրիզմի զարգացող կենտրոն։ Այն հազվադեպ վայրերից մեկն է Հայաստանում, ուր իսկական գյուղացիների հետ կարելի է պատրաստել տեղական ուտեստներ, սովորել ավանդական արհեստաձևերը, մեկնել քայլարշավի ու ձիարշավի, զբաղվել ձկնորսությամբ, մասնակցել տոնածիսական արարողակարգերի։ Օրինակ Գետիկ և Դպրաբակ համանքներում Հայ Միասնության Խաչ կազմակերպությունը նախաձեռնել է գորգագործական և կարպետների արտադրության կենտրոններ, որտեղ տուրիստները ոչ միայն կարող են հետևել հայկական գորգերի պատրաստման ընթացքին, այլ նաև մասնակցել դրան։

Ագրոտուրիզմը անմիջականորեն նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, գյուղմթերքների շուկայի ընդլայնմանը, ինչն էլ հանգեցնում է գյուղաբնակների կյանքի բարելավմանը։

Հայաստանի գյուղական համայնքները ունենալով հրաշալի բնություն, էկոլոգիապես մաքուր միջավայր, պահպանվող վարք ու բարքեր, հետաքրքրում են օտարերկրացիներին: Այնպես որ, իրավամբ կարող ենք ասել, որ մենք մեր երկրում գյուղական տուրիզմը զարգացնելու հզոր նախադրյալներ ունենք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ագրոտուրիզմն այսօր տուրիզմի ոլորտում ձեռք է բերել մեծ ակտուալություն, որը պայմանավորած է սոցիալական, տնտեսական, էկոլոգիական գործոններով: Ագրոտուրիզմը կայուն տուրիզմի տարատեսակ է (''Sustainable tourism''): Այն աշխատանքով և կայուն եկամտով ապահովում է գյուղական բնակավայրերի բնակչությանը՝ նպաստելով տեղաբաշխման համաչափությանը և թույլ չտալով այդ շրջաններից բնակչության միգրացիա: Ագրոտուրիզմը նպաստում է բնակչության կենսամակարդակի և կրթամշակութային մակարդակի բարձրացմանը: Նրա շնորհիվ պահպանվում է գյուղի ավանդական նկարագիրն ու մշակութային ժառանգությունը: Ագրոտուրիզմի համար բնությունը համարվում է հենք, ռեսուրս, ուստի և այն նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը՝ տուրիստների մոտ ևս սերմանելով էկոլոգիական կրթություն: Ագրոտուրիզմի մատչելիությունը թույլ է տալիս զարգացնել և՛ ներքին, և՛ արտաքին տուրիզմը, իսկ բնակչությանը հնարավորություն է տալիս բավարարել բնության հետ շփման պահանջը, որը օրեցօր ավելի ու ավելի է աճում:

Ագրոտուրիզմի շրջանակներում առաջարկվում են բազմաթիվ ծառայություններ, ինչպես օրինակ ձիավարություն, որսորդություն, ձկնորսություն, գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու և այդ ոլորտում գիտելիքներ ստանալու հնարավորություն, առողջ սնունդ և ապրելակերպ, հարմարավետ գյուղական տներ և տեղավորման այլ միջոցներ, որոնք բարձրացնում են տուրիստի գեղագիտական մակարդակը, սերմանում սեր և կապվածություն դեպի գյուղն ու բնությունը:

Դիտարկելով ագրոտուրիզմի աշխարհագրական առանձնահատկությունները, կարելի է նշել, որ բոլոր տարածաշրջաններում նկատվում է այս ոլորտի աճի տենդենց: Ամեն դեպքում կազմակերպչական և ենթակառուցվածքային, ինչպես նաև առաջարկվող տեսականու և տուրիստական հոսքերի տեսանկյունից առաջին տեղում է Եվրոպան: Լավատեսորեն հուսանք, որ առաջիկայում Հայաստանն իր գեղատեսիլ բնությամբ և էկոլոգիապես մաքուր գյուղական բարիքներով ու միջավայրով կզբաղեցնի իր ուրույն և առաջատար տեղը համաշխարհային զբոսաշրջային ոլորտում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

- Գործող օթևանատների վերանորոգում և կահավորում, նորերի հիմնում:
- Տեղական տաքսի ծառայությունները պետք է սովորեն տուրիստների հետ գրագետ աշխատել, որակյալ սպասարկել, ինչպես նաև հասանելի դարձնել իրենց ծառայությունները այս թիրախ խմբի համար: Առկա է նաև միկրոավտոբուսների պահանջարկ, որոնց ծառայությունները հիմնականում հասանելի չեն:
- Համապատասխան տարածքում կարող է գործել տուրիստական գործակալություն կամ տեղեկատվական կենտրոն, որը ընդհանուր տարածաշրջանի տուրիզմի գովազդմամբ կզբաղվի, ինչպես նաև առանձին բիզնեսների առաջմղմամբ:
- Համայնքներում խմելու ջրի ներքին ցանցերի վերակառուցում:
- Առողջապահական առաջին օգնության կետի գործարկում:
- Անտառապահպան միջոցառումների իրականացում, արդյունաբերական անտառահատումների կանխարգելում:
- Համայնքների արտաքին տեսքը ավելի գրավիչ դարձնելու համար անհրաժեշտ է ոչ միայն ճանապարհների և այլ ենթակառուցվածքների վերանորոգում, այլ նաև գյուղերի արտաքին տեսքի բարելավում՝ տանիքների և զուգարանների վերանորոգման աջակցություն, շինարարական միասնական նորմերի կիրառում, պատշաճ աղբահանություն և բնակչության իրազեկում՝ աղբի կուտակման և գետերի աղտոտման հետևանքների մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ուսումնամեթոդական ձեռնարկ «Գյուղական զբոսաշրջություն», Երևան 2015
2. Бруйн М. Ориентация на клиента. Залог успешного бизнеса. – Bucureşti: Editura Economică, 2001
3. Глушко А.А. Цазыкин А.М. География туризма Владивосток 2002
4. Воскреенский В. Ю., Международный туризм, Инновационные стратегии развития, Москва, ЮНИТИ, 2007
5. https://allbest.ru
6. https://iz.ru
7. https://www.unwto.org/rural-tourism